Իրավանց Օրենքը

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆՑ ՕՐԵՆՔԻ

Միացյալ Նահանգների Կոնգրեսը, սկսվել և կայացել էր Նյու Յորք Քաղաքում Չորեքշաբթի, Մարտի 4-ին, հազար յոթ հարյուր հինգսունութ թվին:

Մի շարք Նահանգների Համագումարները Սահմանադրությունը որդեգրելիս ցանկություն էին հայտնել, որ ավելացվեն հավելյալ օրինական և սահմանափակիչ հոդվածներ՝ կանխարգելելու համար նրա սխալ մեկնաբանությունը կամ ուժի չարաշահումը, քանի որ Կառավարության հանդեպ հանրային վստահության գետնի ընդարձակումը լավագույն կերպով կապահովի նրա հիմնարկների բարերար արդյունքը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Ծերակույտը և Ներկայացուցչական Տունը համագումարի ընթացքում որոշեցին, երկու ներկայացուցչական մարմինների երկու երրորդի հավանությամբ, որ հետևյալ Հոդվածները առաջարկվեն զանազան Նահանգների օրենսդիր մարմիններին՝ որպես բարեփոխումներ Միացյալ Նահանգների Սահմանադրության, այն հասկացողությամբ, որ այս Հոդվածները ամբողջությամբ, կամ նրանցից ցանկացածը՝ տվյալ օրենսդիր մարմնի երեք չորրորդի կողմից վավերացվելուց հետո ուժի մեջ մտնի բոլոր դիտումներով և նպատակներով՝ որպես մաս հիշյալ Սահմանադրության. մասնավորելով՝

Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությանը ավելացված Հոդվածները և բարեփոխումները, որոնք առաջադրվել են Կոնգրեսի և վավերացվել են զանազան Նահանգների օրենսդիր մարմինների կողմից՝ համաձայն սկզբնական Սահմանադրության հինգերորդ Հոդվածի տրամադրությունների:

Ա. Բարեփոխում - Կոնգրեսը չպետք է սահմանի որևէ օրենք, որը կհաստատի ինչ-որ կրոն կամ կարգելի նրա ազատ կիրառումը, կամ կկրճատի խոսքի կամ մամուլի ազատությունը կամ ժողովրդի իրավունքը՝ խաղաղորեն ժողովվելու և Կառավարությանը դիմելու ինչ-որ անարդարություն դարմանելու համար:

Կառավարությունը չի կարող ձեզ ինչ-որ պետական կրոն պարտադրել և ոչ էլ ձեզ պատժել՝ ձեր ընտրած կրոնը կիրառելու համար: Դուք կարող եք ձեր տեսակետներն արտահայտել, գրել և հրատարակել ինչ որ ցանկանաք, խաղաղորեն ժողովվել ուրիշների հետ և պաշտոնապես կառավարությունից պահանջել, որ դարմանի անարդարությունները:

Բ. Բարեփոխում - Լավ կարգավորված զինվորական ուժը ազատ Նահանգի ապահովությանը համար անհրաժեշտ լինելով հանդերձ, ժողովրդի զենք պահելու և կրելու իրավունքը չպետք է բռնաբարվի:

Անհատները («ժողովուրդը») իրավունք ունեն զենքի սեփականության և օգտագործման՝ առանց կառավարության կողմից միջամտության:

Գ. Բարեփոխում - Ոչ մի Զինվոր, խաղաղության ժամանակ, չպետք է տեղավորվի որևէ բնակարանում՝ առանց սեփականատիրոջ հավանության. ոչ էլ՝ պատերազմի ժամանակ, բացի այն դեպքից, երբ օրենքն է տրամադրում:

Կառավարությունը չի կարող պարտադրել ձեզ, որ ձեր տանը տեղ տաք իր գործակալներին:

Դ. Բարեփոխում - Իրենց անձի, բնակարանի, փաստաթղթերի և ստացվածքների ապահովության ժողովրդի իրավունքը չպետք է բռնաբարվի և խուզարկության կամ ձերբակալման Հրամանագրեր չպետք է արձակվեն, բացի այն դեպքից, եթե կա հավանական պատճառ, որին հիմք է ծառայում Երդումը կամ հաստատումը, և որը մասնավորապես նկարագրում է խուզարկելի վայրը և ձերբակալելի անձերն ու բռնագրավելի առարկաները:

Ձեզ չպետք է ձերբակալեն կամ «կալանքի տակ պահեն» կամայականորեն: Կառավարական ոչ մի հիմնարկ չպետք է խուզարկի կամ գրավի ձեր անշարժ կալվածները կամ ունեցվածքները՝ առանց նախ խուզարկության կամ բռնագրավման հրամանագիր ձեռք բերելու: Խուզարկության հրամանագիր ստանալու համար, նրանք պարտավոր են ցույց տալ խուզարկության կամ գրավման համար հատուկ պատճառ և երդվել, որ այդ պատճառների մասին ասում են ճշմարտությունը: Ավելին, խուզարկության հրամանագիրն ինքնին պարտավոր է հատկապես և մանրամասնորեն նշել իր ծածկած վայրը, առարկաները կամ անձերը: Շատ ընդհանրական բնույթի կամ անորոշ հրամանագրեր անվավեր են. հրամանագրի պայմանները գերազանցող խուզարկություններ և բռնագրավումներ անվավեր են:

Ե. Բարեփոխում – Ոչ մի անձ չպետք է պատասխանատու նկատվի մահացու կամ այլապես անարգ ոճրի, բացի այն դեպքից, երբ նախաքննիչ հանձնաժողովը դատապարտագիր կամ ամբաստանագիր է ներկայացնում, բացառությամբ այն գործերի, որոնք հարուցվում են ցամաքային կամ ծովային ուժերում, կամ զինյալ ուժերում՝ Պատերազմի կամ հանրային վտանգի ժամանակ իրողապես ծառայելիս. ոչ մի անձ նույն ոճրի համար չպետք է երկիցս ենթարկվի կյանքը կամ մարմնի անդամը կորցնելու վտանգին. չպետք է պարտավորվի ինք իր անձի դեմ վկայել որևէ քրեական հարցով. չպետք է զրկվի կյանքից, ազատությունից կամ ունեցվածքից՝ առանց օրենքի համապատասխան կիրառման. և անհատական սեփականությունը չպետք է բռնագրավվի հանրային օգտագործման նպատակով՝ առանց արդար հատուցումի:

Զինյալ ուժերից դուրս ոչ մեկ անձ չպետք է դատվի լուրջ ոճրի համար՝ առանց նախ (քաղաքացիների) նախաքննիչ հանձնաժողովի կողմից ամբաստանվելու: Եթե անձը գտնվի անմեղ, նա չպետք է դատվի նորից նույն արարքի համար: Ձեզ չեն կարող պարտադրել, որ դուք ձեր անձի դեմ վկայություն տաք կամ ապացույց ներկայացնեք քրեական հարցով: Առանց համապատասխան քայլերի՝ ձեզ չեն կարող բանտ ուղարկել կամ ձեր ստացվածքները գրավել: Կառավարությունը չի կարող ձեր անշարժ կալվածները բռնագրավել՝ առանց նրա շուկայական արժեքը վճարելու:

Զ. Բարեփոխում – Բոլոր քրեական դատավարություններում, ամբաստանյալը պետք է վայելի արագ և հանրային դատավարության իրավունքը՝ Նահանգի անկողմնակալ դատական ատյանի կողմից և այնպիսի շրջանում, որտեղ ոճիրը գործվել է և որպիսի շրջանը նախապես հաստատագրվել է օրենքով: Նա պետք է տեղյակ պահվի ամբաստանության պատճառի և բնույթի մասին, դեմ հանդիման գտնվի իր դեմ գործող վկաների հետ, վայելի անհրաժեշտ պայմանները՝ ի նպաստ իրեն վկաներ ապահովելու, և ունենա Իրավաբանական Օգնություն ի պաշտպանություն իր անձի:

Դատավարությունները չեն կարող անտրամաբանականորեն հետաձգվել կամ կատարվել գաղտնի: Ձեր դեմ հարուցված ցանկացած քրեական գործում դուք իրավունքն ունեք հանրային դատի՝ անկողմնակալ քաղաքացիների ատյանի կողմից (այսպիսով ապահովելով, որ նահանգը չօգտագործի «կողմնակալ» դատավոր կամ ոտնատակ չանի ձեզ): Դատավարությունը պետք է կայանա այն նահանգում կամ շրջանում, որտեղ գործվել է ոճիրը: Ձեզ չեն կարող վար դնել առանց ամբաստանության: Ձեզ չեն կարող վար դնել այնպիսի ամբաստանություններով, որոնք գաղտնի են պահվել ձեզանից: Դուք իրավունք ունեք իմանալ, թե ո՞վ է ամբաստանում ձեզ և դատարանում դեմ հանդիման գալ վկաներին: Դուք իրավունք ունեք կոչնագիր ուղղել վկաների, որ վկայեն ի նպաստ ձեզ, և իրավունք ունեք օգտվել իրավաբանի ծառայություններից:

Է. Բարեփոխում – Անգիր օրենքի դատերի դեպքում, երբ վեճի գումարը գերազանցում է քսան դոլլարը, պետք է պահպանվի ատյանի կողմից դատվելու իրավունքը, և ատյանի կողմից դատված ոչ մի իրողություն չպետք է այլապես վերաքննվի Միացյալ Նահանգների որևէ Դատարանի կողմից, եթե դա չի համապատասխանում անգիր օրենքի կանոններին:

Ատյանի կողմից դատվելու իրավունքը տարածվում է ինչպես քաղաքացիական այնպես էլ քրեական գործերի վրա: Ատյանի կողմից վճռի արձակումից հետո, ոչ մի դատարան չի կարող շրջել կամ այլապես փոփոխել այդ վճիռը՝ ընդունված օրինական գործընթացներից տարբեր եղանակով (օրինակ,

նոր դատավարություն արտոնելը՝ երբ վերաքննիչ դատարանը որոշի, որ ձեր իրավունքները բռնաբարվել էին սկզբնական դատավարության ժամանակ):

Ը. Բարեփոխում – Չափազանցված երաշխավորագներ չպետք է պահանջվեն, չափազանցված տուգանքներ չպետք է պարտադրվեն, ոչ էլ դաժան և արտասովոր պատիժներ պետք է հասցվեն:

Երաշխավորագինը, տուգանքները և պատիժները պետք է պատշաճեն ոճրին, և պատիժները չպետք է սահմանվեն դաժանորեն:

Թ. Բարեփոխում – Սահմանադրության մեջ մի շարք իրավունքների թվումը չպետք է հիմք հանդիսանա ժողովրդի կողմից պահպանված այլ իրավունքների ուրացման կամ նսեմացման:

Դուք ունեք Իրավանց Օրենքի մեջ հատկապես թվարկված իրավունքներից շատ ավելին:

Ժ. Բարեփոխում – Սահմանադրությամբ Միացյալ Նահանգներին չփոխանցված կամ Նահանգներին չարգելված իրավասությունները վերապահված են Նահանգներին կամ ժողովրդին:

ԱՄՆ-ի դաշնակցային կառավարությունը ունի միայն այն հատուկ իրավասությունները, որոնք իրեն շնորհված են Սահմանադրությամբ: Բոլոր մյուս իրավասությունները պատկանում են կա՛մ նահանգներին և կամ անհատներին:

Իններորդ և տասներորդ բարեփոխումները, միասնաբար վերցրած, նշանակում են, որ դաշնակցային կառավարությունն ունի միայն իրեն շնորհված իշխանությունը, մինչ ժողովուրդը ենթադրաբար ունի ցանկացած իրավունք կամ իրավասություն, որը հատուկ կերպով չի արգելված իրեն: Իրավանց Օրենքը իր ամբողջությանը մեջ նվիրված է ժողովրդի որոշ գլխավոր իրավունքների նկարագրությանը, որոնց վերացումը, կրճատումը կամ բռնաբարումը կտրականապես արգելված է կառավարությանը: Իրավանց Օրենքը հստակորեն մարդկանց դարձնում է պատասխանատու իրենց սեփական կյանքի համար, կառավարությանը ընծայելով խիստ սահմանափակ պատասխանատվություն՝ ճիշտ հակառակը այն կացության, որը մեզ արտոնված է զարգացնել այսօր: